# ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐ

## ԱՎՏՈՐԻՏԱՐ ԾՆՈՂՆԵՐ

Ավտորիտար ծնողների մոտ գերակայում է վարքի վերահսկողության շատ բարձր մակարդակը և երեխային արձագանքելու ցածր մակարդակը: Երեխային վերաբերող բոլոր որոշումներն ընդունվում են ծնողների կողմից: Ծնողը վստահ է, որ երեխան ամեն հարցում պետք է ենթարկվի իր կամքին: Օրինակ, երեխան նվնվում է, փնթփնթում, հրաժարվում է դասերն անելուց:
Ծնողը կարող է այս իրավիճակում պատասխանել.
-Ես հասկանում եմ, որ դու հոգնած ես, այս պահին չես կարողանում կենտրոնանալ դասերիդ վրա, այդ պատճառով փնթփնթում ես, անուշադիր ես:



### Ավտորիտար ծնողները

- սահմանափակում են երեխայի ազատությունը,
- կարծում են, որ երեխային չպետք է որևէ բացատրություններ տալ,
- անընդհատ վերահսկում են երեխայի վարքը,
- հաճախ պատժում են,
- չափազանց խստապահանջ են
- ճնշում են երեխայի զգացմունքների արտահայտումը:

### Ավտորիտար ծնողները

- կարող են լինել բավական ագրեսիվ,
- ոչ ճկուն են,
- ամեն բան դիտում են «սև-սպիտակ» գույների մեջ,
- բացառում են ցանկացած քննարկում:

## Թեև

նմանատիպ ծնողավարական ոճը, կարծես, հստակ կարգուկանոն է ենթադրում, միևնույն ժամանակ այն ունենում է որոշակի խնդրահարույց հետևանքներ

- առաջին հերթին տուժում է երեխայի ինքնաճանաչումն ու ինքնագնահատականը,
- երեխան, ամբողջությամբ հնազանդվելով ծնողներին, չի սովորում ճանաչել սեփական պահանջմունքները, պահանջմունքները, ցանկությունները, հետքրքրություններն ու ձգտումները,

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

- երեխայի մոտ նկատվում է թշնամության և կոնֆլիկտայնության բարձր աստիճան հատկապես դեռահասության շրջանում
- երեխան չի կարողանում ձևավորվել որպեսամբողջական, ամբողջական, լիարժեք անձ:

## Թեև

դաստիարակությունը հիմնվում է միայն արտաքին ճնշման, պատժի, վախի հիման վրա

**...երեխան դառնում է կամ կախյալ ուրիշների կարծիքից, ճնշված էակ, կամ թշնամանքով, դժգոհություններով լի անձ, որը փորձում է իր դիրքը հաստատել ուժով կամ ճնշելով այլ մարդկանց**

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: